# Wer war Surp Sarkis?

Über die Jahrhunderte wurden in Armenien unterschiedliche Legenden mit dem Hl. Sarkis verbunden, gerade im Zusammenhang mit jungen Mädchen im heiratsfähigen Alter. So wurde der Hl. Sarkis einer der populärsten Heiligen der Armenier. Aber wer war eigentlich der Hl. Sarkis und warum gedenkt die Armenische Kirche Seiner mit einem besonderen Tag?

Der Hl. Sarkis war ein General in der römischen Armee. Obwohl uns sein Geburtsdatum unbekannt ist, ist es anzunehmen, dass er in Kappadokien zur Regierungszeit Kaiser Konstantin I. (306-337) geboren wurde und schließlich für ihn in der Armee diente. Ermutigt durch den Erlass des Toleranzedikts von Mailand 313, das den Christen im Römischen Reich die freie Religionsausübung gestattete, hat Sarkis, ein überzeugter Christ, öffentlich im römischen Heer für das Christentum missioniert und viele Soldaten bekehrt. Nach dem Tod Konstantin I. wurde auch die positive Einstellung gegenüber Christen weitergeführt bis zur Regierungszeit von Kaiser Julian, genannt der Abtrünnige (361-363). Julian, als letzter heidnische Kaiser, versuchte die Politik von Konstantin I. und seinen Nachfolgern rückgängig zu machen und die Verfolgungen von Christen waren erneut auf der Tagesordnung. Sarkis geriet in Schwierigkeiten. Da erschien ihm der Herr und sagte, dass er sein Land verlassen soll wie einst Abraham, und in ein anderes Land, welches der Herr ihm zeigen wird, ziehen. Sarkis folgte den Anweisungen des Herrn und kam mit seinem Sohn Mardiros nach Armenien und stellte sich in den Dienst des Königs Diran (342-350) (der Enkelsohn von Dertad). Inzwischen war Kaiser Julian mit seinen Truppen weit nach Osten eingedrungen, das für Christen eine besondere Gefahr darstellte. So riet König Diran Sarkis, nach Persien zu fliehen.

Der Persische König Schapur II. (310-379) benannte Sarkis als Befehlshaber im persischen Heer. Auch hier hat Sarkis missioniert. Es dauerte nicht lange, dass König Schapur von den Bekehrungen seiner Soldaten erfuhr. Da rief er Sarkis und Mardiros zu sich und befahl ihnen, die heidnischen Götter und das Feuer anzubeten. Sarkis lehnte dies ab und sagte, dass nur der eine Gott der Schöpfer des Himmels und der Erde ist, und dass die Figuren der Götter und das Feuer im Tempel von Menschen gemacht sind und somit auch von Menschen zerstört werden können. Sogleich begann er die Figuren zu zerstören. In der dadurch entstandenen Verwirrung wurde Mardiros durch Faustschläge und Fußtritte getötet. Sarkis wurde zunächst inhaftiert, das der König seine „Reue“ erhoffte. Als dies nicht erfolgte wurde Sarkis zum Tode durch Enthauptung verurteilt. Im Jahre 363, am Ort der Urteilsvollstreckung, betete Sarkis folgendermaßen: „Herr, Christus mein Gott, diejenigen, die in ihren Schwierigkeiten meines Namens gedenken und in Erinnerung meines Märtyrertodes durch Gelöbnis und Gottesdienst gedenken, so erhöre sie und gewähre denen alles, was sie von dir erbitten“. Der Herr antwortete, dass er seiner Bitte entsprechen wird.

Der Leichnam des Hl. Sarkis wurde von vierzehn Soldaten bestattet, wofür auch sie alle den Märtyrertod erleiden mussten. Sie alle wurden gemeinsam mit Sarkis und Mardiros von Gläubigen in der Stadt Hamjan bestattet. Schließlich hat der Hl. Mesrop Maschtoz den Leichnam des Hl. Sarkis in die armenische Stadt Garpi gebracht, wo er für ihn ein Kloster bauen ließ, das auch heute noch ein oft und gern besuchtes Ziel vieler Menschen unterschiedlicher Nationalität ist.

Warum nun gerade der Hl. Sarkis in Zusammenhang mit den jungen Mädchen im heiratsfähigen Alter gebracht wird, ist leider nicht näher überliefert.

# Ո՞վ էր Սբ. Սարգիսը

Սբ. Սարգիս դարցած է Հայոց ամենամեծ ժողովրդականութիւն շահած սուրբերէն մէկը մանաւանդ մեզի ծանօթ պատմութիւններով ամուսնատենչ երիտասարդ աղջիկներու առնչութեամբ: Սակայն ո՞վ էր Սբ. Սարգիս եւ ինչու՞ Հայ Եկեղեցին կը յիշատակէ զինք յատուկ օրով մը:

Սբ. Սարգիս զօրավար մըն էր Հռովմէական բանակին մէջ: Թէպէտ իր ծննդեան թուականը մեզի ծանօթ չէ, կը ենթադրուի, որ ինք Կապադովկեայ ծնած է Մեծն Կոստանդիանոսի կայսրութեան ժամանակ (306-337 թ.) եւ յետոյ ծառայած է անոր բանակին մէջ: Քաջալերուելով 313 թ. Միլանոյի Հանդուրժողական հրամանագրի հռչակմամբ, զոր արտօնեց Քրիստոնեաներուն ազատ կրօնական կիրարկումը, Սարգիս, համոզումով Քրիստոնեայ, Քրիստոնէութիւն կը ծաւալէր Հռովմէական բանակին մէջ եւ շատ մը զինուորներէն Քրիստոնեայ դարձած էին: Մեծն Կոստանդիանոսի մահէն յետոյ ալ Քրիստոնեաներու հանդէպ դրական կեցուածքը շարունակուեցաւ մինչեւ Յուլիանոս Ուրացողի թագաւորութեան ժամանակաշրջանը (361-363 թ.): Յուլիանոս, որը Հռովմէական վերջին կռապաշտ կայսրն էր, ջանաց Կոստանդիանոսի քաղաքականութիւնը բեկանել ու Քրիստոնեաներու հալածանքները դարձեալ անցան օրակարգին վրայ: Սարգիս դժուարութեան մատնուեցաւ. Տէրը իրեն երեւալով հրահանգեց զինք իր երկրէն հեռանալ, ինչպէս Աբրահամը անցեալին, ու ուրիշ երկիր մը երթալ, զոր Տէրը իրեն պիտի ցուցնէր: Հետեւելով Տիրոջը պատկամին Սարգիս ու իր որդին Մարտիրոս մեկնեցան Հայաստան եւ սկսան ծառայել Տիրան թագաւորին (342-350 թ.) (Մեծն Տրդատ թագաւորի թոռը): Մինչ այդ, Յուլիանոս կայսրը իր զօրքերով արդէն հասած էր արեւելեան երկիրներ. Հետեւաբար Տիրան թագաւոր յանձնարարեց Սարգիսին անցնիլ Պարսկաստան:

Պարսիկ թագաւորը, Շապուհ Բ. (310-379 թ.) տեսնելով Սարգիսի կարողութիւնը նշանակեց զինք որպէս զօրավար իր բանակին մէջ: Հոս ալ Սարգիս չդադրեցաւ իր Քրիստոնեայ առաքելութիւնը տարածելու եւ երկար չտեւեց, որ Շապուհ իմացաւ  Սարգիսի այս գործունէութեանէն: Ուստի Շապուհ հրաւիրեց Սարգիսը ու Մարտիրոսը եւ հրամայեց անոնց երկրպագել չաստուածներուն ու կրակին: Սարգիս մերժեց ըսելով, թէ միայն մէկ Աստուած գոյութիւն ունի, որը երկնքի ու երկրի արարիչն է: Իսկ կուռքերը ու կրակը մարդոց ստեղծաքործութիւնն է եւ մարդ կարող է զանոնք քանդել: Այս խօսքով Սարգիս  սկսաւ կուռքերը կործանելու: Այդ խառնիճաղանճի մէջ Մարտիրոսը բռունցքներով ու վոտնակոխուելով նահատակուեցաւ: Յուսալով որ Սագիս պիտի "զղջայ" Շապուհ  բանտարկեց զայն: Երբ այդ յոյսը չիրականացաւ, Սարգիս դատապարտուեցաւ մահուան՝
գլխատման վճիռով: 365 թուականին գլխատման տեղը Սարգիս աղօթեց հետեւալը՝
«Ով Տէր, Քրիստոս Աստուած իմ, անոնք որ կը յիշեն իմ անունս իրենց նեղութեան մէջ եւ կը կատարեն իմ նահատակութեանս յիշատակը ուխտով եւ պատարագով, ինչ որ ուզեն քեզմէ, լսէ անոնց եւ շնորհէ անոնց խնդրանքը»: Այն ատեն Տիրոջը ձայնը կը պատասխանէր, թէ իր խնդրանքը պիտի կատարուի:

Սբ. Սարգիսի հաւատարիմ տասնըչորս զինուորները վերցուցին իր մարմինը թաղելու համար. ուստի իրենք ալ նահատակուեցան: Ուրիշ հաւատացեալներ վերցուցին բոլոր նահատակներու մարմինները եւ թաղեցին զանոնք Համիան քաղաքին մէջ: Յետոյ Սբ. Մեսրոպ Մաշտոց տեղափոխեց Սբ. Սարգիսի մարմինը Հայաստանի Կարբի քաղաք եւ հոն անոր գերեզմանին վրայ հռչակաւոր վանք մը կառուցել տուաւ:

Սբ. Սարգիս ճանչցուած էր իր առատաձեռնութեամբ, թէեւ ինք հարուստ չէր: Սպիտակ ձիուն վրայ կը փութար բոլորին օգնութեան հասնելու: